ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<< 23 >> << հուլիսի >> 2019թ. N ՄՌ/307-2019

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-ի N ՄՌ-58-2019Թ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թվականի ապրիլի 25-ի N 471-Ն որոշման 2-րդ կետով հաստատված N 4 հավելվածի N 5 աղյուսակը.

*որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության 2019 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանին <<Այլընտրանքային ծառայության ապահովում>> ծրագրով, տնտեսագիտական դասակարգման <<այլ ընթացիկ դրամաշնորհներ>> հոդվածով նախատեսված 5640000/ հինգ միլիոն վեց հարյուր քառասուն հազար/Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել՝ համաձայն հավելվածի:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, Էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստի պաշտոնակատար Վ. Վարդազարյանին՝ նախկինում կնքված դրամաշնորհի հատկացման պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019թվականի փետրվարի 12-ի <<Դրամաշնորհի հատկացնելու մասին>> N ՄՈ/58/2019 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***Մարզպետ՝*** ***Հ. Մաթևոսյան***

Invalid signature

X

VERIFIED OCSP 7/23/2019 11:25:51 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2019 թվականի հուլիսի 23-ի
ԱՐՊ/30Ա N 2019 որոշման

*Դրամաշնորհի հատկացման ժամանակացույց*

*Հազար դրամ*

| h/h | Համայնքի անվանումը | 1-ին եռամսյակ | Կիսամյակ | Ինն ամիս | Տարի |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | 5 |
| 1 | Արմավիր քաղաքային համայնք | 330.0 | 750 | 1110 | 1470 |
| 2 | Էջմիածին քաղաքային համայնք | 810.0 | 1920 | 2730 | 3450 |
| **3** | Մեծամոր քաղաքային համայնք | 60.0 | 360 | 540 | 720 |

**Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար** **Վ. Վարդազարյան**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 22.07.2019 13:47:28 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217